



**ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Երկու հազար քսանհինգ թվականի դեկտեմբերի տասը 10/12/2025  
Կոտայք նրովյան ք.

Ոչ պետական սեփականություն համարվող տարածքի սեփականատեր՝

**ՍՈՒՍԱՆՆԱ ԲԵՆԻԿԻ ՍԱՅՈՒՆՑԸ**, ծնված՝ 01/09/1979թ-ին, ՀԾՀ՝ 5109790809, Լույնականացման քարտ՝ 009480450, տրված՝ 003-ի կողմից, 28/02/2018թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, Ս. ՏԱՐՈՆՑՈՒ Փ., 3/2, Շ, 17ԲՆ հասցեում, ում անունից ՀՀ «Երևան» Լոտարական տարածքի Լոտար Մերի Մնացականի Սարգսյանի կողմից 08/12/2025թ վավերացրած թիվ 26146 լիազորագրով հանդես է գալիս **ԳԵՎՈՐԳ ԿԱՐԵՆԻ ՍԱՅՈՒՆՑԸ**, ծնված՝ 14/03/2002թ-ին, ՀԾՀ՝ 2423020325, Լույնականացման քարտ՝ 012715520, տրված՝ 012-ի կողմից, 30/04/2020թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱԶԱՓՆՅԱԿ, ՖՈՒՉԻԿԻ 1 ՆՐԲ., 4, Շ, 2ԲՆ, հասցեում, այսուհետ՝ «ՎԱՐՁԱՏՈՒ» մի կողմից և

**«ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»** Պետական մարմինը, հասցե՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԱԶԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., 41Ա, 375038, գրանցման համար՝ 271.184.1051997, ՀՎՀՀ՝ 01223338, ի դեմս Գլխավոր քարտուղար՝ **ԱՇՈՏ ԷՂՈՒԱՐԻ ԱՎԱԳՅԱՆԻ**, ՀԾՀ՝ 3011650098, անձնագիր՝ AT0662835, տրված՝ 008-ի կողմից 10/02/2021թ-ին, հաշվարված՝ ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՊՐԱՀԱՅԻ Փ., S 51, 0082, ում անունից համաձայն 01/12/2025թ. տրված թիվ ՆՓ-33078-2025 լիազորագրով հանդես է գալիս **ԱԼԲԵՐՏ ՎԱՉԳԵՆԻ ՆԱՉԱՐՅԱՆԸ**, ծնված՝ 30/11/1974թ-ին, ՀԾՀ՝ 4011740292, անձնագիր՝ AT0411111, տրված՝ 001-ի կողմից, 20/02/2020թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Փ., 79, Շ, 41ԲՆ հասցեում, այսուհետ՝ «ՎԱՐՁԱԿԱՆ», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՔԸ**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը:

**2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

2.1. Պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող **Մարզ Կոտայք, համայնք Նաիրի Եղվարդ ք.** հասցեում, /կադաստրային ծածկագիր՝ 07-004-0499-0070/ գտնվող 10,15613 /տաս ամբողջ տասնհինգ հազար վեց հարյուր տասներեք/ հա ընդհանուր մակերեսով անշարժ գույքից, **ըստ պայմանագրին կցված հատակագծի, 2.3 /Երկու ամբողջ երեք/ հա ընդհանուր մակերեսով տարածք**, իսկ Վարձակալը օգտագործելու է այն ըստ Օբյեկտի նպատակային նշանակության՝ գործունեություն ծավալելու /օգտագործման նպատակը/ նպատակով և վերադարձնելու է պայմանագրի դադարելուց հետո՝ անփոփոխ վիճակում:

2.2. Տարածքի սխեմատիկ պատկերը /հատակագիծը/ և դրա որոշակիորեն սահմանման ու բնութագրման համար անհրաժեշտ և բավարար տեղեկությունները տրվում են գույքի նկատմամբ վարձատուի իրավունքները հավաստող վկայականին համապատասխան:



2.3. Տարածքը Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից 13/10/2025 տրված թիվ 13102025-07-0096 սեփականության վկայականի հիման վրա սեփականությամբ իրավունքով պատկանում է Վարձատուին:

2.4. Պայմանագիրը կնքելու պահին տարածքը գրավ դրված է, արգելանքի տակ է գտնվում «Արդշինբանկ» ԲԲԸ-ում՝ համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից 02/12/2025թ. տրված թիվ ՄՏ-02122025-07-0339 Միասնական տեղեկանքի:

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ  
Գույքի կազմում առկա է ինքնակամ կառուցված շենք շինություններ 3312.85 քմ ընդհանուր մակերեսով: 10.15613հա-ից 9.64613հա-ը՝ վարելահող, 0.51հա-ը՝ այլ հողատեսք: ՀՀ Հարկային օրենսգրքի 236-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների համաձայն, օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի հաշվառող մարմինների կողմից տրված անշարժ գույքի մասով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվում է հարկադիր կատարման ծառայության, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից: «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի 4-5-րդ և 7-րդ հոդվածների համաձայն՝ գույքի օտարման գործարքների դիմաց որոշակի սահմանաչափերը գերազանցող գումարն անկանխիկ չվճարելու դեպքում տվյալ գործարքներն առոչինչ են:  
Առկա է «Արդշինբանկ» ԲԲԸ կողմից 08/12/2025թ. տրված թիվ 1973-13578 համաձայնությունը, որի համաձայն՝

« Կողմերը համաձայնում են, որ

ա) վարձակալության հանձնվող գույքը ծանրաբեռնված է «Արդշինբանկ» ԲԲԸ գրավի իրավունքով,

բ) վարձակալության հանձնվող գույքի՝ որպես գրավի առարկայի, վրա բռնագանձում տարածելու և իրացնելու դեպքում վարձակալության պայմանագիրը համարվում է դադարած: Գրավի առարկայի նկատմամբ բռնագանձում տարածելու և իրացնելու հիմքերի առկայության դեպքում Կողմերը սույնով տալիս են իրենց համաձայնությունը և լիազորում են «Արդշինբանկ» ԲԲԸ-ին՝ ի դեմս ցանկացած աշխատակցի, վարձակալության պայմանագրի դադարման դիմում ներկայացնել պետական լիազոր մարմին:

գ) վարձակալի կողմից վարձավճարի վճարումը կատարվում է բանկային փոխանցմամբ վարձատուի «Արդշինբանկ» ԲԲԸ-ում գտնվող թիվ **2474902749220030** ՀՀ դրամ արժույթով բանկային հաշվին,

դ) վարձակալության հանձնվող գույքի գրավով ապահովված պարտավորությունը խախտվելու դեպքում վարձատուի վարձավճարի գծով պահանջի իրավունքը համարվում է փոխանցված «Արդշինբանկ» ԲԲԸ-ին:

Կողմերը պարտավորվում են վարձակալության պայմանագրի կնքումից հետո 15 օրացույցային օրվա ընթացքում «Արդշինբանկ» ԲԲԸ-ին ներկայացնել կնքված վարձակալության պայմանագրի պատճենը, իսկ Բանկի պահանջի դեպքում՝ գործարքը հիմնավորող այլ փաստաթղթերի պատճեններ:

Կողմերն իրավունք չունեն առանց «Արդշինբանկ» ԲԲԸ-ի նախնական գրավոր համաձայնության փոխել սույն կետը:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

3.1. Պայմանագիրը կնքվում է 3 /երեք/ տարի ժամկետով:

Ժամկետի սկիզբ է համարվում տարածքի հանձնման-ընդունման ակտն ստորագրելու օրը:

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում նոտարական վավերացման և պետական գրանցման պահից:

3. Տարածքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձանց հիմք չէ պայմանագիրը լուծելու համար:

#### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1. Պայմանագրի կնքման պահին տարածքի համար ամսական վարձավճարը սահմանվում է **2.395.000 /երկու միլիոն երեք հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամ:**

4.2. Վարձակալը վարձատուի հաշվին փոխանցում է վարձավճարը պայմանագրում նշված հաշվեհամարին՝ տարածքի հանձնման-ընդունման ակտի ստորագրման օրվանից յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 10-ը (տասը): Վարձավճարը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:

#### **5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5.1. Վարձատուն իրավունք ունի՝

5.1.1. պահանջել վարձակալից տարածքն օգտագործել պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխան.

5.1.2. պահանջել վարձակալից լուծել պայմանագիրը և հատուցել վնասները, եթե վարձակալը տարածքն օգտագործել է պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանն անհամապատասխան.

5.1.3. պահանջել վարձակալից վաղաժամկետ մուծել վարձավճարը, եթե վարձակալության վճարի մուծման էական խախտումներ են թույլ տրվել:

5.2. Վարձատուն պարտավոր է՝

5.2.1. տարածքը վարձակալին տրամադրել պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.

5.2.2. տարածքը վարձակալին հանձնել հանձնման-ընդունման ակտով՝ պայմանագրի նոտարական վավերացման պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում.

5.2.3. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, վարձակալին գրավոր տեղեկացնել տարածքն ազատելու անհրաժեշտության մասին՝ կապված շենքը հիմնական վերանորոգման կանգնեցնելու կամ քաղաքաշինական նկատառումներով այն քանդելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ:

5.3. Վարձակալն իրավունք ունի՝

5.3.1. տարածքը ենթավարձակալության հանձնելու կամ օգտագործելու այլ կերպ՝ միայն վարձատուի գրավոր համաձայնության դեպքում:

5.4. Վարձակալը պարտավոր է՝

5.4.1. տարածքն օգտագործել պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապատասխան.

5.4.2. ժամանակին մուծել տարածքն օգտագործելու համար պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված վճարը (վարձավճարը), ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր այլ վճարներ.

5.4.3. պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացնել իր միջոցների հաշվին.

5.4.4. վարձակալած տարածքի տարածքներում պահպանել սանիտարական և հակահրդեհային կանոնների պահանջները, ինչպես նաև բոլոր այն կանոնները և նորմերը, որոնք գործում են վարձակալի գործունեության ձևերի ու վարձակալած տարածքի նկատմամբ.

5.4.5. երկամսյա ժամկետում ազատել տարածքը՝ կապված տարածքի (կամ դրա մի մասի) կառուցվածքների (կոնստրուկցիաների) վթարային վիճակի, տարածքը հիմնական վերանորոգման ենթարկելու կամ քաղաքաշինության նկատառումներով այն քանդելու հետ.

5.4.6. վարձատուին անմիջապես տեղեկացնել տարածքի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) տարածքին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար, ինչպես նաև տարածքը հետագայում քանդելու կամ վնասելու դեմ.

5.4.7. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված տարածքի սպասվելիք ազատման մասին՝ կապված պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու հետ.

5.4.8. տարածքն ազատելիս այն սարքին վիճակում հանձնել ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Վարձակալը պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված վարձավճարի կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար վարձատուին վճարում է տույժ՝ ապառքի 0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3. Վարձատուն պայմանագրի 5.2.2-րդ կետում նշված ժամկետում տարածքը վարձակալին չհանձնելու դեպքում յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վարձակալին վճարում է տույժ՝ վարձավճարի 0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Տույժի մուծումը կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց:

6.5. Կետանցի վրա տույժը հաշվարկվում է մինչև կողմերի կողմից պարտավորության փաստացի կատարումը:

## 7. ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ

վարձակալի պահանջով պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե՝

1. վարձատուն վարձակալի օգտագործմանը չի տրամադրել տարածքը կամ խոչընդոտներ է եղծել տարածքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար.

5.2.2. վարձակալին հանձնված տարածքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել վարձակալին, և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս.

9.2.3. հանգամանքների բերումով, որոնց համար վարձակալը պատասխանատու չէ, տարածքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

## 10. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՇԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

10.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 11. ԵՃՐԱՓՈՎԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Պայմանագիրը կնքված է հայերենով 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, սակայն օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահպանվող օրինակին:

11.2. Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

ՎԱՐՁԱՏՈՒ ՍՈՒՍԱՆՆԱ ԲԵՆԻԿԻ ՍԱՅՈՒԼՅԻ կողմից լիազորված անձ՝



ՎԱՐՁԱԿԱԼ «ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄ և ԴՊԱՀՈՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմնի կողմից լիազորված անձ՝



Կոտայք Արուսյան ք.  
Երկու հազար քսանհինգ թվականի դեկտեմբերի տասը

7.1. Վարձակալած տարածքից վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համար են նրա սեփականությունը:

7.2. Վարձակալի կողմից կատարված վարձակալած տարածքից անբաժանելի բարելավումներ արժեքը չի հատուցվում:

## **8. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1. Պայմանագրից ծագող օգտագործման իրավունքը պետք է պետական գրանցման ներկայացվի ոչ ուշ, քան պայմանագրի նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում համաձայն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի:

8.2. Պայմանագրի գործողությունը կարող է դադարել կողմերի համաձայնությամբ՝ երկու ամիս առաջ դրա մասին ծանուցելով մյուս կողմին, ինչը ձևակերպվում է համաձայնագրով՝ նոտարական վավերացմամբ, ինչպես նաև կողմերից մեկի պահանջով՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 35-րդ հոդվածով սահմանված կարգով ցանկացած այլ ժամկետում վեց ամիս առաջ դրա մասին ծանուցելով մյուս կողմին:

8.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում և ձևակերպում լրացուցիչ համաձայնագրերով՝ նոտարական վավերացմամբ:

8.4. Տարածքի (շենքերի, շինությունների) վրա արտաքին գովազդի և տեղեկատվության օբյեկտների տեղադրումն իրականացնում է վարձակալը կամ նրա հետ համապատասխան պայմանագիր կնքած անձը՝ առանց վարձատուի համաձայնության, եթե՝

8.4.1. այն չի հակասում սահմանված քաղաքաշինական կանոններին (կարգերին).

8.4.2. չի առաջացնում հատուկ թույլտվության անհրաժեշտություն:

8.5. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

## **9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

9.1. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե վարձակալը՝

9.1.1. տարածքն օգտագործել է պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության եական կամ բազմակի խախտումներով.

9.1.2. եականորեն վատթարացրել է տարածքի վիճակը.

9.1.3. պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամ և ավելի չի մուծել վարձավճարը.

9.1.4. առանց վարձատուի գրավոր համաձայնության կնքել է ենթավարձակալության պայմանագրեր և մտել է գործարքների մեջ (իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի մեջ տարածքի կամ դրա մի մասի վարձակալության իրավունքի ներդրում):

յն պայմանագիրը վավերացված է իմ ՀՀ «Կոտայքի մարզ» նոտարական տարածքի նոտար  
ՅԱՆԵ ԲԱԲԻԿԻ ՍԱՐՈՅԱՆԻՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ  
երկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը,  
իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները,  
լիազորված անձի լիազորությունները, և անշարժ գույքի նկատմամբ՝ **ՍՈՒՄԱՆԱ ԲԵՆԻԿԻ  
ՍԱՅՈՒՆՑԻ** իրավունքները ստուգված են: ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 611-րդ հոդվածի  
համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ԳՐԱՆՑՎԱԾ Է ԳՐԱՆՑԱՄԱՍՏՅԱՆՈՒՄ՝ **4829**

Գանձված է պետական տուրք հինգ հարյուր ՀՀ դրամ և ծառայության վճար մեկ հազար ՀՀ  
դրամ, որը չի ներառում ավելացված արժեքի հարկը՝ 20%՝ համաձայն «Պետական տուրքի  
մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:


Նոտար **Գայանե Բաբիկի Սարոյան**



# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Մարզ Կոտայք, համայնք Նաիրի Եղվարդ ք.  
Մարզ, համայնք, հասցե

Կողմատկանցման հիմքը



Իրեն հա	2.3
Հարկային	07-004-0499-0070
Ստանդարտային նշանակություն	Գյուղատնտեսական
Ստանդարտային նշանակություն	Կարելաիողայլ հողատեսք
Նշանակություն	
Ստացի չափագրություն	

Հողատարածի (բնկան) կետեր	Հողամասի կողողինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
	1	4463080.83	
2	4462858.04	8457336.63	31.03
3	4462846.26	8457307.92	31.96
4	4462814.45	8457311.00	25.91
5	4462805.89	8457286.55	30.78
6	4462833.68	8457273.30	89.93
7	4462914.76	8457234.41	41.80
8	4462901.95	8457194.63	59.99
9	4462959.96	8457179.38	

Մասշտաբ 1:5000		
Որակավորում ունեցող անձ	Գևորգ Աբրահամյան	
Որակավորման վկայականի համարը	0255	
Ստորագրություն	<i>[Signature]</i>	
Իրավաբանական անձի անվանումը	«Արվ Թրասթ» ՊԲԸ	
ՀՎԳԴ	02852244	
Ստորագրություն	<i>[Signature]</i>	
ամիս	չափագրության	16.10.2025
ամսաթիվ	հատակագծի կազմման	27.10.2025







# Արդշինբանկ

№ 1973-13578

«08» 12 2025թ.

«ՖՈՐՍԱԺ ԱՎԻՍ»  
ՀՎՀՀ՝ 00

Գործադիր մարմնի ղեկավար՝ Սուսաննա Սայր

Սուսաննա Սայր

ՀՀ նույնականացման քարտ՝ 0094

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույնով «Արդշինբանկ» ԲԲԸ-ը (այսուհետ նաև՝ Բանկ) տալիս է իր համաձայնությունն առ այն, որ «Արդշինբանկ» ԲԲԸ գրավի իրավունքով ծանրաբեռնված Մարզ Կոտայք, համայնք Նաիրի եղվարդ ք. հասցեում գտնվող անշարժ գույքի 2 մակերեսով տարածքը (Վկայական՝ 13102025-07-0096), այսուհետ «Գույք», պայմանագրի կնքմամբ հանձնվի (տրամադրված վարձակալության «ՀԱՐՎԱԴՐԻ ՎԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՄ-ին (ՀՎՀՀ՝ 01223338), պայմանով, որ վարձակալության պայմանագրում ներառված լինի ներքոհիշյալ բովանդակությամբ կետ՝

« Կողմերը համաձայնում են, որ

ա) վարձակալության հանձնվող գույքը ծանրաբեռնված է «Արդշինբանկ» ԲԲԸ գրավի իրավունքով,

բ) վարձակալության հանձնվող գույքի՝ որպես գրավի առարկայի, վրա բռնագանձում տարածելու և իրացնելու դեպքում վարձակալության պայմանագիրը համարվում է դադարած: Գրավի առարկայի նկատմամբ բռնագանձում տարածելու և իրացնելու հիմքերի առկայության դեպքում Կողմերը սույնով տալիս են իրենց համաձայնությունը և լիազորում են «Արդշինբանկ» ԲԲԸ-ին ցանկացած աշխատակցի, վարձակալության պայմանագրի դադարման դիմում ներկայացնել պետական լիազոր մարմին:

գ) վարձակալի կողմից վարձավճարի վճարումը կատարվում է բանկային փոխանցմամբ վարձատուի «Արդշինբանկ» ԲԲԸ գտնվող թիվ 2474902749220030 ՀՀ դրամ արժույթով բանկային հաշվին,

դ) վարձակալության հանձնվող գույքի գրավով ապահովված պարտավորությունը խախտվելու դեպքում վարձակալության գծով պահանջի իրավունքը համարվում է փոխանցված «Արդշինբանկ» ԲԲԸ-ին:

Կողմերը պարտավորվում են վարձակալության պայմանագրի կնքումից հետո 15 օրացուցային օրվա ընթացքում «Արդշինբանկ» ԲԲԸ-ին ներկայացնել կնքված վարձակալության պայմանագրի պատճենը, իսկ Բանկի պահանջի դեպքում՝ գործ հիմնավորող այլ փաստաթղթերի պատճեններ:

Կողմերն իրավունք չունեն առանց «Արդշինբանկ» ԲԲԸ-ի նախնական գրավոր համաձայնության փոփոխել սույն կետը:»

Վարձակալության պայմանագրում սույն համաձայնության մեջ նշված պայմանները չներառվելու կամ ներառվելու խախտվելու դեպքերում «Արդշինբանկ» ԲԲԸ-ն իրավունք ունի գանձել տուգանք և/կամ բարձրացնել գրավով ապահով պարտավորության տարեկան տոկոսադրույքը և/կամ պահանջել վաղաժամկետ կատարելու գրավով ապահով պարտավորությունը, իսկ այդ պահանջը չբավարարվելու դեպքում՝ բռնագանձում տարածելու գրավի առարկայի վրա, և գրավի վարձակալությունը անվավերացնելու կարգով:

Սույն համաձայնության ելքագրման պահից 40 օրացուցային օրվա ընթացքում գործարքի չիրականացման վերաբերյալ հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում Դուք ազատվում եք սույն համաձայնությունից բխող պարտավորություններից:

Սույն համաձայնությամբ նախատեսված գործարքի իրականացմամբ Դուք անվերապահորեն համաձայնում եք համաձայնությամբ սահմանված բոլոր պայմաններին:

Սույն համաձայնությունը չի դադարեցնում Գույքի նկատմամբ «Արդշինբանկ» ԲԲԸ գրավի իրավունքը:

Հարգանքով,

Վարկային հետգործառնությունների վարչության պետ՝

Արփինե Հովսեփյան

